



# Օրակարգ

Պետական Գնումների  
SIGMA-ի Երկրորդ Տարածաշրջանային ԵՀՔ Արևելյան Խորհրդածողով  
Կազմակերպված՝

SIGMA  
և  
Ուկրաինայի Տնտեսական Զարգացման և Առևտրի Նախարարության  
կողմից

Կիև, Ուկրաինա, 29-30 մայիսի 2018թ.



Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) համատեղ նախաձեռնության SIGMA-ն և Ուկրաինայի Տնտեսական զարգացման և առևտրի նախարարությունը կազմակերպում են ԵՀՔ Արևելյան բոլոր երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) համար պետական գնումների երկրորդ տարածաշրջանային Եվրոպական հարևանության (ԵՀՔ) արևելյան խորհրդածողովը:

## Նախապատմություն

Պետական գնումները պետական գումարների ծախսման հիմնական միջոցներից մեկն են: Դա լավ պետական ֆինանսների կառավարման անբաժան մասն է: Ինչպես նաև, դրա տնտեսական ազդեցությունը և՛ Էական է, և՛ շատ տեսանելի: Պետական գնումները կարող են բարելավել երկրի տնտեսության մրցունակությունը, ինչպես նաև օգնել քաղաքականության հիմնական արդյունքների իրականացմանը՝ ի պատասխան այսօրվա հասարակական և տնտեսական մարտահրավերների՝ հասցեագրելով նորամուծությունը, ներառականությունը և բնապահպանական ու սոցիալական նկատառումները: Պետական գնումները դառնում են քաղաքականության ռազմավարության մի գործիք: Նոր կանոններով, պետական գնումների ընթացակարգերը կօգնեն նաև, որ պետական գնումներ կատարողներն իրականացնեն բնապահպանական քաղաքականությունները, ինչպես նաև սոցիալական ինտեգրման և նորամուծության քաղաքականությունները: Սակայն, ծառայությունների մատուցման բարձր որակն ու պետական շահերն ապահովելու համար, քաղաքական միջավայրը պետք է հնարավորություն ընձեռնի պետական գնումների համակարգի պատշաճ քաղաքականությունների ձևակերպման համար, և պետական մարմինները պետք է արդյունավետ և բարձր ստանդարտներով իրականացնեն պետական գնումների ընթացակարգերը:

ԵԶՔ արևելյան տարածաշրջանի երկրների մեծ մասը գտնվում են իրենց պետական գնումների համակարգերի արդիականացման գործընթացում: Ասոցացման բոլոր երեք երկրները (երկրներ, որոնք ստորագրել են Ասոցացման համաձայնագրեր Եվրոպական միության [ԵՄ]՝ Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) գտնվում են իրենց պետական գնումների օրենսդրության և պրակտիկայի՝ ԵՄ ստանդարտների հետ ներդաշնակեցման փուլում: Նրանցից պահանջվում է ցույց տալ, որ կենտրոնական կառավարության մակարդակում ունեն վարչական կարողությունների բավարար աստիճան՝ երաշխավորելու պետական գնումների ամբողջովին ապահով և արդյունավետ համակարգ: Բացի դրանից, համաձայն ԵՄ հետ վերջերս ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի, Հայաստանը պարտավորվել է իր պետական գնումների օրենսդրությունն ու պրակտիկան հարմարեցնել միջազգային ստանդարտներին (հիմք ընդունելով ԱՀԿ/կառավարության գնումների համաձայնագիրը [GPA] և Եվրոպական լավագույն փորձը): Ադրբեջանը բանակցում է ԵՄ հետ նոր առևտրային համաձայնագիրը, և պետական գնումները լինելու են դրա մի մասը:

Հետևաբար, ԵՄ հետ իրենց հարաբերությունների բնույթից անկախ, ԵՀԿ արևելյան տարածաշրջանի բոլոր երկրները դիտարկում են ԵՄ պետական գնումների օրենսդրությունն ու պրակտիկան, որպես հղման առանցքային կետ:

Բոլոր երկրները շահագրգռված են 2014թ. ԵՄ պետական գնումների հրահանգներով սահմանված որոշ նոր գործիքների և մեխանիզմների ներդրմամբ, ինչպիսիք են շրջանակային համաձայնագրերը, կենտրոնական գնումների մարմինները և Էլեկտրոնային գնումները դրա տարբեր ձևերով: Գոյություն ունի նաև ուժեղ անհրաժեշտություն և հետաքրքրվածություն կենտրոնական պետական

գնումների հաստատությունների, պատվիրատու մարմինների և տնտեսվարող սուբյեկտների բոլոր մակարդակներում կարողությունների զարգացման համար: Բարեփոխումների այս աշխատանքները լուրջ մարտահրավեր են և երկրները անկասկած կօգտվեն երկխոսության և տեղեկատվության փոխանակման արդյունավետ մեխանիզմից: Պետական գնումների բարեփոխումների նպատակը պետք է լինի *ԵՅՔ երկրների պետական կառավարման սկզբունքներում* ուրվագծված բոլոր նպատակների իրականացումը<sup>1</sup>:

Բոլոր երկրներում կենտրոնական կառավարության մակարդակում պետական գնումների հաստատությունները հետաքրքրություն են արտահայտել պետական գնումների ոլորտում տարածաշրջանային համագործակցության զարգացման հարցում, այլ երկրների գործընկերների հետ պարբերաբար խորհրդակցություններ անցկացնելու և տեղեկատվություն, խորհուրդ ու մոդելներ ստանալու համար, որոնք կարող են ներշնչել ու խթանել իրենց սեփական ազգային բարեփոխումների նախաձեռնությունները: Այս հետաքրքրությանն անդրադառնալու համար այլ տարածաշրջաններում այսպիսի խաչաձև նախաձեռնությունների շատ լավ օրինակներ կան: SIGMA արդեն մի տարածաշրջանային խորհրդաժողով է կազմակերպել տարածաշրջանի պետական գնումների պաշտոնյաների համար (2014թ., Փարիզում) և այդ միջոցառումը բարձր էր գնահատվել բոլոր մասնակիցների կողմից:

## **Նպատակներ**

Հիմնական նպատակն է մասնակիցներին ներկայացնել ԵՄ պետական գնումների համակարգի և միտումների, ձեռքբերումների և տարածաշրջանային մարտահրավերների ամենավերջին զարգացումները: Միջոցառումը հարթակ է SIGMA-ի գործընկեր ԵՅՔ արևելյան երկրների, Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ անդամ երկրների միջև \$որմալ և ոչ \$որմալ փորձի փոխանակման համար: Տարածաշրջանի գնումների առանցքային մասնագետները կսովորեն և ավելի լավ կըմբռնեն, թե ինչպես են ԵՄ անդամ պետություններն իրականացնում և օգտագործում 2014թ. ԵՄ պետական գնումների հրահանգներով սահմանված նոր ընթացակարգերն ու գործիքները:

## **Հիմնական թեմաներ**

Խորհրդաժողովի հիմնական թեման կլինի միջազգային պրակտիկային պետական գնումների համակարգերի հարմարեցման աճող ճնշմամբ ներկայացված մարտահրավերները: SIGMA կօգտագործի նաև այս հնարավորությունը՝ ներկայացնելու պետական գնումների իր նոր հրապարակումները: Ներկայացումները և քննարկումները կկազմակերպվեն հետևյալ երեք հիմնական թեմաների շուրջ՝

- ԵՄ պետական գնումների և օրենսդրական դաշտ: Ազգային մակարդակում դրա իրականացման գործնական փորձն ու ապագա զարգացումները (հիմք ընդունելով Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ անդամ պետությունների ներկայացուցիչների ներկայացումները),

<sup>1</sup> OECD (2017), SIGMA, [The Principles of Public Administration for ENP countries](#), OECD, Paris.

- ԵՅՔ արևելյան տարածաշրջանի պետական գնումների բարեփոխումների ամենավերջին ձեռքբերումներն ու մարտահրավերները (հիմք ընդունելով ԵՅՔ երկրների ներկայացուցիչների ներկայացումները),
- Պետական գնումների հիմնական հարցերի SIGMA ամենավերջին ուսումնասիրությունները՝ շրջանակային համաձայնագրերը և տնտեսվարող սուբյեկտների ընտրությունը գործնականում՝ ԵՄ ազգային օրինակների համեմատական վերլուծությամբ (հիմք ընդունելով SIGMA փորձագետների ներկայացումները):

## **Մասնակիցներ**

Խորհրդաժողովին կմասնակցեն պետական գնումների բարեփոխումների նախագծման և իրականացման համար իրենց երկրներում պատասխանատու ԵՅՔ արևելյան երկրների բարձրաստիճան պաշտոնյաները՝ կենտրոնական պետական գնումների գրասենյակների/գործակալությունների և գնումների բողոքարկման մարմինների ղեկավարները և հիմնական աշխատակիցները կամ պետական գնումների համար պատասխանատու գլխադասային նախարարությունների և այլ պետական մարմինների պաշտոնատար անձինք: Յուրաքանչյուր ԵՅՔ արևելյան երկրից, ներառյալ ընդունող երկիրը, հինգ մասնակիցներ կֆինանսավորվեն SIGMA կողմից: Ընդունող երկրից լրացուցիչ մասնակիցներ կարող են մասնակցել իրենց հաշվին (SIGMA կողմից չֆինանսավորվող): DG GROW և DG NEAR և ԵՄ անդամ պետություններից ազգային փորձագետների մասնակցությունն նույնպես նախատեսված է: Տարածաշրջանում ակտիվ այլ միջազգային դոնորների ներկայացուցիչները կիրավիրվեն, որպես դիտորդներ (ՎՁԵԲ, ԵՆԲ և Համաշխարհային բանկ):

## **Վայրը**

Խորհրդաժողովը տեղի կունենա Կիևում, Ուկրաինա՝ 29-30 մայիսի 2018թ.:

## **Ձևաչափ**

Խորհրդաժողովը կլինի ինտերակտիվ և հիմնված դեպքերի ներկայացումների վրա: ԵՅՔ երկրների և ԵՄ անդամ պետությունների փորձագետները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչները կտեղեկացնեն մասնակիցներին ԵՄ քաղաքականությունների մասին և լավ պրակտիկայի վերաբերյալ օրինակներ կբերեն: Մասնակիցներին կխնդրեն ներկայացնել իրենց երկրների վերջին զարգացումները և փոխանակվել փորձով: Հանդիպումը բոլոր մասնակիցներին հնարավորություն կտա նաև ոչ ֆորմալ հանդիպումներ ունենալ՝ համեմատելու ազգային փորձն ու քննարկել առանձնահատուկ հարցեր գործընկերների հետ ու ավելի պարբերաբար փոխանակումների համար կապեր ձևավորել:

## **Լեզուն**

Միջոցառման աշխատանքային լեզուն կլինի անգլերենը: Կապահովվի ուկրաիներեն, հայերեն, մոլդովերեն, ադրբեջաներեն և վրացերեն թարգմանություն:

## Օրակարգ

### Երկուշաբթի 28 մայիսի 2018թ.

#### 18:00 - 20:00 **Պաշտոնական ողջույնի կոկտեյլ**

Վայր՝ Intercontinental Hotel, Կիև

### Երեքշաբթի 29 մայիսի 2018թ.

Վայր՝ «Zoloti Vorota» սրահ Intercontinental Hotel, Կիև

Նախագահող՝ տիկին Երիկա Բոզգալ, քաղաքականության ավագ խորհրդական, SIGMA

#### 09.00 - 09.30 **Գրանցում**

#### 09.30 - 10.00 **Բացում և ողջույնի խոսքեր**

**Պրն. Ստեփան Կուրբիվ**, Առաջին փոխվարչապետ, Ուկրաինայի տնտեսական զարգացման և առևտրի նախարար

**Պրն. Ջյուլ Մինգարելլի**, Դեսպան, Ուկրաինայում ԵՄ պատվիրակության ղեկավար

**տիկին Երիկա Բոզգալ**, քաղաքականության ավագ խորհրդական, SIGMA

#### 10.00 - 10.20 **Սուրճի ընդմիջում**

#### 10.20 - 12:15 **Նիստ 1. Պետական գնումների համակարգի շրջանակի և ամուր հիմքերի մշակման առանցքային առաջնահերթությունների վերաբերյալ լիազուժար քննարկում**

Սողերատոր՝ Տիկին Մարգարետա Մուլինար, Պետական գնումների փորձագետ, Յունգարիա

Բանախոսներ՝

**Պրն. Բոնիֆասիո Գարսիա-Պորրաս**, Բաժնի պետ G/2 Մատչում գնումների շուկաներին, Եվրոպական հանձնաժողով, DG GROW՝

Աշխատատեղերի և աճի համար ժամանակակից պետական գնումների առանցքային արժեքներն ու սկզբունքները

**Պրն. Մաքսիմ Նեֆյոդով**, Ուկրաինա, Տնտեսական զարգացման և առևտրի առաջին փոխնախարար՝

Պետական գնումների բարեփոխումները Ուկրաինայում՝ մարտահրավերներ և ձեռքբերումներ

**Տիկին Մարիա Ստիլիանիդու,** ՅԷԼԵՆԻԿ բաց համալսարանի պրոֆեսոր, միասնական պետական գնումների մարմնի անդամ, Յունաստան՝

Պետական գնումների բարեփոխումները Յունաստանում՝ ԵՄ պետական գնումների հրահանգների և կառուցվածքային բարեփոխումների իրականացումը

**Պրն. Մարիան Լեմկե,** քաղաքականության ավագ խորհրդական, SIGMA՝

Պետական կառավարման սկզբունքները, որպես պետական գնումների բարեփոխումների իրականացման առաջընթացի գրանցման գործիք

**12.15 - 12.30 Խմբային լուսանկար**

**12.30 - 14.00 ճաշ**

**14.00 – 15.30 Նիստ 2. Պետական գնումների իրավական դաշտի բարեփոխումների վերաբերյալ լիազումար քննարկում – օրենսդրական բարեփոխումները ԵՅԶ արևելյան տարածաշրջանում**

Սողեբատոր՝ **Պրն. Պյոտր-Նիլս Գորեցկի,** քաղաքականության ավագ խորհրդական, SIGMA

Բանախոսներ՝

**Պրն. Լասլո Կոժնոկ,** իրավաբան, G/2 Մատչում գնումների շուկաներին, Եվրոպական հանձնաժողով, DG GROW՝

Համատեղ աշխատանք հանուն տարածաշրջանում ժամանակակից պետական գնումների համակարգերի

**Պրն. Կախի Դեմետրաշվիլի,** Վրաստանի պետական գնումների գործակալության նախագահի տեղակալ՝

ԵՄ ասոցացման համաձայնագրի իրականացումը – իրավական մերձեցման մարտահրավերները

**Պրն. Բահադիր Գասիմով,** Կառավարության գնումների վարչության պետ, Հակամենաշնորհների և սպառողների իրավունքների պաշտպանության պետական ծառայություն, Ադրբեջան

Պետական գնումների օրենսդրության բարելավում

**Պրն. Ռուսլան Մալայ,** Պետական գնումների գործակալության պետ, Մոլդովա՝

ԵՄ-Մոլդովա ասոցացման համաձայնագրի իրականացում

**Պրն. Վահե Մահտեսյան,** Գնումների գործընթացի կարգավորման բաժնի պետ, Ֆինանսների նախարարություն, Հայաստան՝

Միջազգային կարգավորումների հետ ներդաշնակեցման մարտահրավերները (GPA և ԵԱՏՄ)

### 15.30 - 15.45 **Սուրճի ընդմիջում**

### 15.45 - 17.00 **Նիստ 3. Էլեկտրոնային գնումների վերաբերյալ լիազումար քննարկում՝ հնարավորություններ և մարտահրավերներ**

Սողեբատոր՝ **Պրն. Յարեմա Դուլ**, Ուկրաինա, Միջազգային համագործակցության բաժնի պետ, (ՊԳ վարչություն), Տնտեսական զարգացման և առևտրի նախարարություն (ՏՁԱՆ)

Բանախոսներ՝

**Տիկին Կառմեն Ռալուկա Իպատե**, քաղաքականության պատասխանատու, G/2 Մատչում գնումների շուկաներին, Եվրոպական հանձնաժողով, DG GROW

Պետական գնումների թվային տրանսֆորմացիայի խթանումը ԵՄ-ում

**Տիկին Լիլիա Լախտինովա**, Ուկրաինա, Տնօրեն, Պետական գնումների կարգավորման վարչություն (ՊԳ վարչություն), Տնտեսական զարգացման և առևտրի նախարարություն (ՏՁԱՆ)՝

Էլեկտրոնային գնումները, որպես թափանցիկության և արդյունավետության մեծացման գործիք – ձեռք բերված արդյունքները

**Պրն. Յուրի Սիսիբաբա**, Քաղաքականության խորհրդական, Ֆինանսների նախարարություն, Մոլդովա՝

Նոր Էլեկտրոնային գնումների համակարգի ձևավորում – դիլեմաներ և մարտահրավերներ

**Պրն. Թաթո Ուրյունեւաշվիլի**, փորձագետ, Վրաստան՝

Էլեկտրոնային գնումների ապագան

### 19.00 - 21.00 **ճաշ**



## Չորեքշաբթի 30 մայիսի 2018թ.

Վայր՝ «Zoloti Vorota» սրահ Intercontinental Hotel, Կիև

### **09.00 - 11.00 Նիստ 4. Կենտրոնացման միջոցով պետական գնումների արդյունավետության բարելավման վերաբերյալ լիազումար քննարկում**

Մոդերատոր՝ Տիկին Դարյա Կուլցենկո, Ուկրաինա, Կորպորատիվ զարգացման ղեկավար, ՊՁ «Profesiyni Zakupivli» (Ուկրաինայի գնումների կենտրոնական մարմին - ԳԿՄ)

Բանախոսներ՝

**Պրն. Պեդեր Բլումբերգ**, գնումների փորձագետ, Շվեդիա՝

Չաչող կենտրոնացված գնումների պայմանները

**Տիկին Կենզա Խաչանի**, ՏՀԶԿ, Պետական կառավարման տնօրինություն, Պետական գնումների բաժին՝

Կենտրոնացված գնումները ՏՀԶԿ երկրներում

**Տիկին Իվանչիկա Ֆրանյկովիչ**, Ոլորտի պետ, Աշխատանքի և կենսաթոշակային համակարգի նախարարություն, Խորվաթիա՝

Կենտրոնացված գնումներ Խորվաթիայում – հաջողված՝

### **11.00 - 11.15 Սուրճի ընդմիջում**

### **11.15 - 12.15 Նիստ 5. Գնումների գործընթացի բարելավում՝ գործնական օրինակներ՝ հիմք ընդունելով ամենավերջին SIGMA փաստաթղթերը**

Մոդերատոր՝ Պրն. Մարիան Լեմկե, քաղաքականության ավագ խորհրդական, SIGMA

Բանախոսներ՝

**Տիկին Մալգորզատա Ստախովյակ**, գնումների փորձագետ, Լեհաստան՝

Տնտեսվարող սուբյեկտների ընտրությունը պետական գնումների ընթացակարգերում՝ ԵՄ օրենսդրության և պրակտիկայի ակնարկ

**Պրն. Դանիել Իվարսոն**, գնումների փորձագետ, Շվեդիա՝

Շրջանակային համաձայնագրերի իրականացումը ԵՄ-ում

12.15 - 13.15 **Ճաշ**

13.15 - 15.15 **Նիստ 6. Համակարգի խնամակալները**

Մոդերատոր՝ Տիկին Մարգարետա Մուլնար, Պետական գնումների փորձագետ, Հունգարիա

Բանախոսներ՝

**Պրն. Սիլվու Պոպա**, Բողոքների լուծման ազգային խորհրդի նախագահ, Ռումինիա՝

Արդյունավետ և անկախ բողոքարկման համակարգի պահանջները

**Տիկին Ալինա Ծատուրյան**, Գնումների բողոքարկման մարմնի անդամի խորհրդական, Հայաստան՝

Բողոքարկման համակարգի գործունեությունը

**Տիկին Օլեսա Ստամատե**, AGER (Արդյունավետ և պատասխանատու կառավարման ասոցիացիա) նախագահ, Մոլդովա՝

Պետական գնումների գործընթացների դիտարկումը քաղաքացիական հասարակության կողմից

**Պրն. Օլեկսանդր Շկուռոպատ**, Ուկրաինայի աուդիտի պետական ծառայության պետի առաջին տեղակալ

Պետական գնումների աուդիտ

15.15 - 15.30 **Ճանապարհ առաջ – քննարկումներ և փակման խոսք**

15.30 - 16.00 **Կապերի հաստատման հնարավորությունն սուրճ/թեյով**

[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

2 Rue André Pascal  
75775 Paris Cedex 16 France  
mail to: [sigmaweb@oecd.org](mailto:sigmaweb@oecd.org)  
Tel: +33 (0) 1 45 24 82 00